

Ան չի գոհանար աշխարհաբարին բառամթերքի աղքատությամբ. դասական մատենագրությունն էլ քաղէ բառերու ամբողջ հոյլ մը, ճոխերանգ, պապղուն, կարծես Շեփեստոսի<sup>25</sup> ձուլարանն էն նոր հանուած գրահներու քիչ մը վայրի վայելչութեամբ: Իրաւունք ունի Վարուժան, կարելի չէ մերժել անցեալի գեղեցկութիւնները, մանավանդ իրեն նման հոգի մը՝ արտայայտութեան նորանոր միջոցներու կը կարօտի: Վարուժան ինչպէ՛ս նկարագրեր ասպետական դարերու այն շքեղ *Հարճը*, եթէ Արսէն Բագրատունիի *Իլիականն*<sup>26</sup> կամ *Հայկ Դիւցազնն*<sup>27</sup> չընտրեր ազնուագգի բառերու մթերք մը: Բագրատունիի, Հիւրմիզի, Ալիշանի լեզուին ազդեցութիւնը անվրէպ է Վարուժանի լեզուին վրայ: Վարուժանի արուեստին մաս կը կազմէ իր հմտութիւնը, հեթանոսական կամ այլ կեանքի ներշնչումներուն մէջ. շեշտուած գիտնութիւն մը կայ, հին բարքերու, սարուածքի, տեղական գոյներու՝ ասոնցմով մանաւանդ իր գործերուն մէջ տիրող իրապաշտութիւնն բալ կը զօրանայ, թէւ չի դադրիր փոխնի փոխ խորհրդապաշտ եւ նոյն իսկ ռոմանթիք ալ ըլլալէ: Լրացնելու համար: Վարուժան տակաւին քսաներութ ձմեռներու գարունն է ողջունած եւ արդէն անմահութեան դափնիները կը կրէ. բանաստեղծի մը չապրիր իր մէջ, հապա բանաստեղծները կ'ապրին. իր ներկայ գործը որքա՛ն հոյակապ՝ տակաւին նախաբանն է անոնց, որոնք պիտի գան հայ գրականութեան փառքերէն ըլլալ: Ի՞նչ պիտի կոչուին անոնք, անշուշտ *Հացին երգը*, թերեւս Հոմերական մեծ դիւցազներգութիւն, կամ թախծալից եւ վսեմ սաղմոսները մշտեղով կեանքին:

Իր արուեստը՝ ձգտումը չի ճանչնար, որովհետեւ տիեզերանալ կը ձգտի, եւ լաւ է որ այդպէս ալ շարունակէ, հակառակ բաղձանքներու եւ քննադատութեանց. եւ ճիշդ կ'ըսէ ինք *Մատեանն ահա*ին մէջ՝

*Խորիէ թէ միշտ քրննադատն է միացեայ,  
եւ ներքինի բարոյագէտը խոհեմ.*